



Գործ № ՇԴ1/0872/02/16

ՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

20 սեպտեմբերի 2017թ.

ք. Գյումրի

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը հետևյալ կազմով՝

Նախագահող դատավոր՝
Քարտուղար՝

Գագիկ Հովհաննիսյան
Վարդան Ավետյան

Մասնակցությամբ

Հայցվոր՝

ՀՀ Շիրակի մարզի Նահապետավան համայնք
(ՀՎՀՀ՝ 06101149, վկայական՝ թիվ Բ 002458)

Հայցվորի

ներկայացուցիչներ՝

Գոռ Պետրոսյան
(ՀՀ նույնականացման քարտ՝ 000124735, տրված՝ 26.11.2012թ-ին 028-ի կողմից)

Էրիկ Հայրապետյան
(ՀՀ նույնականացման քարտ՝ 005413596, տրված՝ 31.05.2014թ-ին 012-ի կողմից, փաստաբանի գործունեության արտոնագիր թիվ 2020)

Պատասխանող՝


Ռուլանդ Նազարեթյան
(ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AM0310898, տրված՝ 24.05.2011թ-ին 028-ի կողմից)

Երրորդ անձի
ներկայացուցիչներ՝

Անահիտ Մուվարյան
(Լիազորագիր թիվ 01/5724-17, տրված՝ 21.08.2017թ.)

Արմեն Մինասյան
(Լիազորագիր թիվ 01/5724-17, տրված՝ 21.08.2017թ.)

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի ՀՀ Շիրակի մարզի Նահապետավան համայնքի /հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, գյուղ Նահապետավան, ՀՎՀՀ՝ 06101149, վկայական՝ թիվ Բ 002458/ ընդդեմ Ռուլանդ Նորայրի Նազարեթյանի /հասցե՝ Շիրակի մարզ գյուղ Հառիճ/ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի /հասցե՝ ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16/ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու պահանջի մասին.



Մտից թիվ 11691-17
21. 11. 2017

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվոր՝ ՀՀ Շիրակի մարզի Նահապետավան համայնքն հայցադիմում է ներկայացրել ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ Ռուլանդ Նորայրի Նազարեթյանի, երրորդ անձ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի պայմանագիրը վաղաժամկետ լուծելու պահանջի մասին:

Հայցադիմումը Դատարանի կողմից 03.08.2016թ. կայացրած որոշմամբ ընդունվել է վարույթ:

26.01.2017թ. կայացրած վճռով Դատարանը վճռել է՝ ՀՀ Շիրակի մարզի Նահապետավան համայնքի հայցն ընդդեմ Ռուլանդ Նորայրի Նազարեթյանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի՝ /իրավահաջորդ՝ ՀՀ Շիրակի մարզի Նահապետավան համայնք/ և Ռուլանդ Նորայրի Նազարեթյանի միջև 16.11.2005թ. կնքված հողամասի վարձակալության մասին պայմանագիրը վաղաժամկետ լուծելու պահանջի մասին մերժել, անհիմն լինելու պատճառով:

Դատարանի 26.01.2017թ. կայացրած վճիռը հայցվոր՝ ՀՀ Շիրակի մարզի Նահապետավան համայնքի կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան: Վերջինիս կողմից 13.04.2017թ. կայացրած որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի՝ թիվ ՇԴ1/0872/02/16 քաղաքացիական գործով Դատարանի կողմից 26.01.2017թ. կայացրած վճիռը՝ բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 13.04.2017թ. կայացրած որոշումը պատասխանողի կողմից բողոքարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

21.06.2017թ. Վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին:

Սույն քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանից ստացվելուց հետո վարույթ է ընդունվել 14.08.2017թ.:

07.09.2017թ-ին պատասխանող Ռ.Նազարեթյանը հայցադիմումի պատասխան է ներկայացրել Դատարան:

07.09.2017թ-ին գործով դատական նիստի ժամանակ դատարանը գործի քննությունը համարել է ավարտված և վճռի հրապարակման օր է նշանակել 20.09.2017թ-ը:

2. Հայցվորի իրավական դիրքորոշումը.

Հայցվոր կողմը հայցապահանջը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

ՀՀ Շիրակի մարզպետարանի, որպես վարձատու և պատասխանող Ռուլանդ Նորայրի Նազարեթյանի որպես վարձակալ միջև 16.11.2005 թվականին կնքվել և նոտարական կարգով վավերացվել է հողամասի վարձակալության մասին պայմանագիրը (այսուհետ նաև Պայմանագիր), որի համաձայն՝ վարձատուն մրցույթում հաղթող ճանաչված անձին՝ վարձակալին, համապատասխան վարձավճարի դիմաց, նրա տիրապետմանը և օգտագործմանն է տրամադրվել 100 հա

